ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 0610-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Պատվական Անդրանիկի Շաքրիկյանի 30,04,2024 թվականի թիվ 2666 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի 04-066-0260-0133 կադաստրային ծածկագրով հողաամասում գտնվող կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Պատվական Անդրանիկի Շաքրիկյանին /ծնված 04.06.1943թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0260-0133 կադաստրային ծածկագրով 450.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 64.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան:

2. Պատվական Անդրանիկի Շաքրիկյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի 04-066-0260-0133 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 514,0 քմ օրինական հողամասի վրա 1993թ. կառուցված 81,2 քմ ներքին և 92,8 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական :

3.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Պատվական Անդրանիկի Շաքրիկյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղ 04-066-0260-0133 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ Այգեգործական թաղամասի 4-րդ փողոց 5:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մայիս 06
ք. Արմավիր